ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.06.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/65

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 03.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/1-1/8891-2019 գրությամբ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.05.2019թ. թիվ ՊՆ/02/606-19 գրության հիման վրա, 29.05.2019թ. թիվ 26/1-1/8891-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպվել է (էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև 2019թ. ապրիլի 19-ը, ժամը 10:30-ը) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն և մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում որպես մասնակից նշված է՝ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ և Ընկերության էլ. հասցե նշված է՝ area_2018@bk.ru:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.2 կետի համաձայն՝ որոշվեց հրապարակել նիստի արդյունքները և համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն ընդհանրապես չի ներկայացրել և հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետը՝ որոշել է մերժել «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն և մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.2 կետի համաձայն՝ որոշվեց հրապարակել նիստի արդյունքները և համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Իսկ արդեն գնահատող հանձնաժողովի 13.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն ընդհանրապես չի ներկայացրել և հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետը՝ որոշել է մերժել «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի հայտը:

Վերոգրյալի հետ կապված Ընկերությունը հայտնել է, որ www.armeps.am համակարգ մուտք գործելու համար «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն ուներ երկու էջ՝

1. area-kanzler /«ԱՌԷԱ Պապիրուս» ՍՊԸ /
2. AREA2018 /«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ /

Գնումների հետ կապված բողոքը քննող անձին Ընկերությունը տեղեկացրել է, որ Ընկերությունը «armeps» էլեկտրոնային համակարգում մշտապես աշխատել է AREA2018, ավելին ներկայացված Հավելված 1 որպես ընկերության անուն նշված է «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ը, իսկ որպես էլ. հասցե ՝ area_2018@bk.ru:

Հաշվի առնելով, որ «armeps» էլեկտրոնային համակարգում երկու էջերի մեջ առկա է ԱՌԷԱ անվանումը, որը կարող էր խնդիրներ առաջացնել պատվիրատուների համար՝

Ընկերության հետ աշխատելու համար «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն 01.04.2019թ. դիմում է ներակայցրել ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալին, որով մասնավորապես խնդրել է տալ համապատասխան ցուցում՝ ապաակտիվացնելու համար area-kanzler օգտանունով էջը /կցվում է/:

Ի պատասխան վերոնշված գրության՝ ՀՀ ՖՆ հայտնել էր, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02/04/2019թ. ժամը 09:04-ին «area-kanzler» մուտքանունով գրանցումն ապաակտիվացվել է /կցվում է/:

Ապաակտիվանալուց հետո որոշ մրցույթներին մասնակցելով՝ պատվիրատուները դեռևս Ընկերությանն ուղված ծանուցումները ուղարկում էին area-kanzler օգտանունով էջին, մինչդեռ ինչպես պարզ էր ՀՀ ՖՆ գրությունից 02.04.2019թ.-ից area-kanzler օգտանունով էջը չպետք էր ակտիվ լիներ և նշվածի արդյունքում ծանուցումները չէին հասնում Ընկերությանը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը Ընկերությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, որ անկախ համակարգում նույնանուն համընկումներին՝ Ընթացակարգի քարտուղարը պարտավոր էր առաջնորդվեր Հավելված 1 նշված էլ. հասցեից, որտեղ նշված է area_2018@bk.ru, իսկ եթե առաջնորդվել է համակարգում գրանցված «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» անվան համընկումով, ապա ինչու է ընտրել «ԱՌԷԱ Պապիրուս» ՍՊԸ անունը, այլ ոչ թե Հավելված 1 նշված ընկերության անվանումը «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ:

Վերոնշված խնդրի վերաբերյալ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն 20.05.2019թ. նորից գրություն է ներկայացրել ՀՀ ՖՆ առաջին տեղակալ Կ. Բրուտյանին /կցվում է/, որով մասնավորապես խնդրել է՝ տալ համապատասխան ցուցումներ պարզաբանելու Ընկերությանը հասցեագրված ոչ ավտոմատ ծանուցումների չստացման պատճառները և area-kanzler մուտքանունով «ԱՌԷԱ Պապիրուս» ՍՊԸ ապաակտիվացված էջը անվանափոխելու XXX, որպեսզի որևէ անվանական համընկում չլինի գործող էջի հետ կամ ընդհարապես հեռացնելու, որը կարող է դառնալ թյուրիմացությունների պատճառ, պատվիրատուների կողմից ոչ ավտոմատ ծանուցումներ ուղարկելիս այդ էջը ընտրելու դեպքում:

Ենթադրելով, որ նույն խնդիրն է առաջացել նաև ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի քարտուղարի կողմից ուղարկված ծանուցման հետ, և հնարավոր է ծանուցումը ոչ ավտոմատ եղանակով ուղարկել է «armeps» էլեկտրոնային համակարգում այլևս չգործող Ընկերության էջին՝ ս.թ. մայիսի 21 Ընկերությունը համապատասխան գրություն է ներկայացրել ՀՀ ՊՆ-ին /կցվում է/, որով խնդրել է հետևյալը. «ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պահանջի դեպքում մասնակցի հայտի, ներառյալ գնային, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Ելնելով վերոհիշյալից՝ խնդրում եմ անհապաղ տրամադրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ/հաղթող մասնակից ճանաչված «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին ոչ ավտոմատ ծանուցմամբ ուղարկված նամակի PrtSc արտատպումը /կամ переслать տարբերակով ուղարկել մեր էլ. հասցեին/, որում տեսանելի կլինի, թե ծանուցումը ուղարկելու օրը, և թե «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի որ էլ. հասցեին է ուղարկվել նամակը»:

Ի պատասխան վերոնշված գրությանը՝ ՀՀ ՊՆ-ն ս.թ. մայիսի 22-ին հայտնել է՝ հարգելի պարոն Զանյան, Ձեր 21.05.2019թ. ժամը 21:40 Դիմումին ի պատասխան, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակտով, կից ներկայացվում է Ձեր կողմից հայցված PrtSc արտատպումը:

Իսկ ի պատասխան «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից 20.05.2019թ. ներկայացրած գրության ՀՀ ՖՆ-ն հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ գրությամբ նշված ընթացակարգերի գործընթացներով պայմանավորված գնահատող հանձնաժողովների քարտուղարների կողմից AREA2018 մուտքանունով «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ անվանումով կազմակերպության armeps համակարգում գրանցած էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ-նամակներ կից ֆայլերով՝ 07/05/2019թ. ժամը 11:40-ին ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/3/Բ/1/ՕԲ ծածկագրի, 07/05/2019թ. ժամը 11:42-ին ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/6 ծածկագրի, 30/04/2019թ• ժամը 17:56-ին և 07/05/2019թ. ժամը 18:17-ին ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրի, 02/05/2019թ. ժամը 09:59-ին և 07/05/2019թ. ժամը 18:19-ին ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-19/6 ծածկագրի և 16/05/2019թ. ժամը 18:16-ին ՀՀՎԱ-ԳՀԱՊՁԲ-19/12 ծածկագրի շրջանակներում, իսկ համակարգում ապաակտիվ կարգավիճակով «ԱՌԷԱ Պապիրուս» ՍՊԸ անվանումով, «area-kanzler» մուտքանունով կազմակերպությանը վերոգրյալ եղանակով ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ-նամակներ կից ֆայլերով 03/05/2019թ• ժամը 12:30-ին և 07/05/2019թ. ժամը 16:01-ին ՀՀՎԱ-ԳՀԱՊՁԲ-19/12 ծածկագրի, 26/04/2019թ. ժամը 11:43-ին, 06/05/2019թ. ժամը 18:27-ին և 16/05/2019թ. ժամը 18:46-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2 ծածկագրի շրջանակներում, ինչի արդյունքում ՀՀՎԱ-ԳՀԱՊՁԲ-19/12 ծածկագրով ընթացակարգին վերաբերող վերջին երկու, իսկ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2 ծածկագրով ընթացակարգին վերաբերող վերոգրյալ ոչ ավտոմատ ծանուցումները չեն ուղարկվել հայտի փաթեթ ներկայացրած «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ անվանումով կազմակերպությանը:

Տվյալ պարագայում Ընկերությունը գտնում է, որ առկա չէ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից միտումնավոր որակավորման փաստաթղթեր չուղարկելու փաստը, քանի որ առկա է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով ընթացակարգի քարտուղարի անփույթ և անհասկանալի գործողություններ:

Մասնավորապես, նշված փաստերը և որպես հիմք՝ նաև ՀՀ ֆինանսների նախարարության 20.05.2019թ. ներկայացրած գրությունը, փաստում են, որ «ՀՀ ՊՆ

ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ոչ ավտոմատ ծանուցումները չի ուղարկվել հայտի փաթեթ ներկայացրած «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ անվանումով կազմակերպությանը, ուստի չաշխատող, ապաակտիվացրած էջին ուղարկած ծանուցումը «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն չէր կարող ստանալ, իսկ այնուհետև ներկացներ պահանջված փաստաթղթերը:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, մինչդեռ այս պարագայում Ընթացակարգի քարտուղարը որոշում է կայացրել միայն ծանուցել համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակի միջոցով:

Վերոհիշյալի պատճառով «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն ոչ միայն զրկվել է Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչվելու իրավունքից և կրել ֆինանսական վնաս, այլ նաև կանգնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առաջ:

Ավելին, նշված ողջ ժամանակահատվածում «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն ձեռնարկել է բոլոր միջոցները, դիմել է ՀՀ ՖՆ-ին և խնդրելով ապաակտիվացնել երկրորդ օգտանունը և հետագայում որոշ Պատվիրատուների կողմից ծանուցումներ չստանալով նորից դիմելով ՀՀ ՖՆ-ին, խնդրել տալ պարզաբանում ծանուցումներ չստանալու վերաբերյալ, որին ի պատասխան ՀՀ ՖՆ փաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով և ևս երկու ծածկագրերով ընթացակարգերին վերաբերող ոչ ավտոմատ ծանուցումները չեն ուղարկվել

հայտի փաթեթ ներկայացրած «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ անվանումով կազմակերպությանը:

Օբյեկտիվորեն «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն չէր կարող տեսնել կամ ստանալ ոչ ավտոմատ եղանակով համակարգի միջոցով ուղարկված փաստաթղթերը, քանի որ այն ուղարկվում էր այնպիսի հասցեի, որը ապակտիվացված է և նույն փաստական հանգամանքով պայմանավորված չենք ստացել նաև ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ուղարկված ծանուցումը, քանի որ այն ուղարկվել է ապաակտիվացրած հասցեի:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին չվերագրել «Գումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/65 ընթացակարգի շրջանակներում 04.06.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարություն կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.05.2019թ. թիվ ՊՆ/02/606-19 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից 12, 13, 15, 30, 31, 65, 66 և 68 չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով Ընկերությանը համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը, ուստի գնահատող

հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները, որոշել է մերժել մասնակցի գնման հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/65 ընթացակարգի շրջանակներում 04.06.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/65 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/65 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 17.04.2019թ. հայտ է ներկայացրել «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 06.05.2019թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում ընդհանրապես չեն ներկայացվել հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/1-1/8891-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.05.2019թ. թիվ ՊՆ/02/606-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 17.04.2019թ. հայտ է ներկայացրել «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին

06.05.20192. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ուղարկվել է ծանուցում Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում ընդհանրապես չեն ներկայացվել հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է մի շարք գրավոր ապացույցներ, որոնց համաձայն.

«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.04.2019թ. թիվ ԱՊ/ԳՐ/2019/04/40 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունն էլեկտրոնային գնումների Armeps համակարգում ունի երկու էջ: Նույն գրությամբ Ընկերությունը խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանն ապաակտիվացնելու «area-kanzler» օգտանունով էջը:

ՀՀ ֆինանսների նախարարությունն Ընկերությանն ուղղված համապատասխան գրությամբ հայտնել է, որ 02.04.2019թ. ժամը 09:04-ին «area-kanzler» մուտքանունով գրանցումն ապաակտիվացվել է:

Ընկերությանն ուղղված մեկ այլ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ համակարգում ապաակտիվ կարգավիճակով «ԱՌԷԱ Պապիրուս» ՍՊԸ անվանումով, «area-kanzler» մուտքանունով կազմակերպությանը ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ուղարկվել են էլեկտրոնային ուղերձ-նամակներ կից ֆայլերով 06.05.2019թ. ժամը 18:27-ին և 16.05.2019թ. ժամը 18:45-ին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում, ինչի արդյունքում ***<u>«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով ընթացակարգին վերաբերող վերոգրյալ ոչ ավտոմատ ծանուցումները չեն ուղարկվել հայտի փաթեթ ներկայացրած «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ անվանումով կազմակերպությանը:</u>***

ՀՀ ֆինանսների նախարարության վերոհիշյալ գրությանը կցվել են Armeps էլեկտրոնային համակարգի համապատասխան էջերի քաղվածքները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Հրավերի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում

ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Այսպիսով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելուց հետո, Ընկերությանը Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ուղարկվել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ծանուցումը, միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ նշված ծանուցումը, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության վերոհիշյալ գրության, ուղարկվել է «area-kanzler» մուտքանունով դեռևս 02.04.2019 թվականից ***ապաակտիվ կարգավիճակով «ԱՌԷԱ Պապիրուս» ՍՊԸ-ի հասցեին***, որի հետևանքով Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն չի ստացել վերոհիշյալ ծանուցումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում հրավերով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելը պայմանավորված է եղել ծանուցումը չստանալու հանգամանքով:

Այսպիսով՝ Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա չեն Ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/1-1/8891-2019 գրությամբ «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**